

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մամիկոն Յավրույան  
ԱրՊՀ  
Արցախ

*Անտառացիա:* Սոկրատ Խանյանի գունեղ և հարուստ բառապաշարի խոսուն վկայությունն են հոմանիշները: Անշուշտ, բանաստեղծի վարպետությամբ է պայմանավորված բառապաշարի այս կամ այն բառի հոմանիշային միավորի տեղին կատարված ընտրությունը: Բանաստեղծի ստեղծագործություններում հոմանիշների գործածությունը մի շարք նպատակներ է հետապնդում, դրանք են՝ խոսքին սաստկական և առավել համոզիչ երանգ հաղորդելը, անհարկի կրկնություններից խուսափելը, խոսքի հանգավորում ստեղծելը և այլն:

*Բանալի բառեր՝* բառապաշար, հոմանիշ, նույնանիշ, գեղարվեստական խոսք, համանիշ, խոսքային հոմանիշներ:

Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոմանիշների առկայությունը լեզվում:

Խանյանի բանաստեղծական խոսքում լայնորեն օգտագործվում են բառերի իմաստաձևային խմբերի ոճական նրբերանգները: Նրա լեզվին առանձնակի հմայք ու հյութեղություն է հաղորդում նույնանիշների և հոմանիշների առատ օգտագործումը: Դրանց ընտրությունն ու տեղին գործածումը մեծ նշանակություն ունի բանաստեղծական խոսքի ճիշտ կառուցման համար, դա գրողի բառապաշարի հարստության արտահայտչականություններից մեկն է: **Հոմանիշներն** աչքի են ընկնում իմաստային բազմազան նրբություններով, ուստի դրանց հաճախակի օգտագործումը հարստացնում և ճոխացնում է գրողի լեզուն: Ս.Խանյանը հմտորեն է օգտվել հայերենի հոմանիշներից և նույնանիշներից՝ դրանով գեղեցկացնելով և հարստացնելով իր լեզուն: Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոմանիշների առկայությունը լեզվում: Ընդունված է ասել, որ հոմանշությունը ոճագիտության հիմքն է: Ասել է թե՛ ոճաբանական ելակետերն ու մոտեցումները հիմնականում գործում են այն դեպքում, եթե կա ընտրության հնարավորություն, եթե կան հոմանիշներ ու զուգաձևություններ:

Ս. Աբեղյանը առաջիններից մեկն էր, ով անդրադարձավ հոմանշության խնդրին և տարբերակելով մերձիմաստ և նույնիմաստ բառերը՝ առանձնացրեց հոմանիշների երկու տարատեսակ՝ համանիշներ և նույնանիշներ [1, էջ 159 ]: Հետագայում, սակայն, ինչպես նկատում է Ն. Պառնասյանը, դպրոցական քերականությունների մեջ հոմանիշ և նույնանիշ տերմինները նույնացվեցին, իսկ իմաստային և կիրառական նրբերանգներ ունեցող բառերի համար սկսեց գործածվել հոմանիշ տերմինը [2, էջ 21 ]: Այսպիսով՝ հոմանիշների բնութագրման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոմանիշները մերձիմաստ կամ նույնիմաստ լեզվական իրակություններ են, որոնք տարբերվում են արտահայտչության ձևերով ու ոճական կիրառությամբ:

Ինքնատիպ և գեղեցիկ հոմանիշներով հարուստ է Ս. Խանյանի չափածոն: Բանաստեղծը օգտվում է հոմանիշներից՝ երբեմն անհարկի կրկնություններից խուսափելու համար: Այսպես, օրինակ.

Դիզափայտը շոյում է **զավակներին** անձնվեր,

Արևսարը հրճվանքից սեզ գլուխն է օրորում:

Իրար նեցուկ են դարձել **որդիները** Դիզակի... [9, էջ 184 ]

Մեկ այլ տեղ՝

...Որտե՞ղ է ննջում, ո՞ք կաղնու **ներքո** կամ ո՞ք Ժայռի **տակ**... [9, էջ 204 ]

\*\*\*

Ուր թշնամանք ու կրակ, ուր **պատերազմ** կա ահեղ,

Այնտեղ կա և՛ հաղթություն, և՛ պարտություն կա այնտեղ:

Աշխարհացունց **մարտերում** ո՞վ չի խոցվել սրերից... [9, էջ 187 ]

Նույնանիշներից օգտվելիս Ս.Խանյանը հաշվի է առնում նրանց ոճական տարբերություններն ու կիրառական առանձնահատկությունները՝ արփի [9, էջ 147 ], արև [9, էջ 153], ճանապարհ [9, էջ 83] , ճամփա [9, էջ 73 ], առավոտ [8, էջ 302 ], այգ [9, էջ 234 ], տանկ [9, էջ 243 ] , հրասայլ [9, էջ 242 ] :

Որքան հմտորեն է օգտվում գրողը մայրենի լեզվի հոմանիշներից, այնքան ճիշտ, պատկերավոր ու արտահայտիչ է նրա բանաստեղծական խոսքը: Տվյալ բովանդակության, մտքի, այս կամ այն զգացմունքի նրբերանգներին համապատասխան հոմանիշներ ընտրելը անչափ կարևոր է գեղարվեստական խոսքի համար: Դա պայմանավորված է հոմանիշների յուրահատուկ բնույթով: Հոմանիշները, ունենալով ընդհանուր, իրար խիստ մոտ նշանակություններ, իրարից տարբերվում են իմաստային նրբերանգներով ու ոճական, կիրառական առանձնահատկություններով: Հոմանիշների մեջ միշտ էլ նկատելի է երկու կողմ.

1. նրանց իմաստային ընդհանրությունը,

2. ամեն մի հոմանիշի մեջ եղած մասնավոր լրացուցիչ իմաստային նրբությունը և հուզաարտահայտչական այս կամ այն երանգը, որոնցով և պայմանավորված են նրանց ոճական կիրառությունների տարբերությունները:

Հենց այդ լրացուցիչ, երկրորդական իմաստային նրբությունների առկայությունն է հոմանիշների մեջ, որ անհնարին է դարձնում մի հոմանիշի փոխարեն մի այլ հոմանիշի գործածությունը՝ չնայած նրանց իմաստային ընդհանրությանը:

Ս. Խանյանը կարողանում է ցանկացած բառային համատեքստում ճիշտ հոմանիշային ընտրություն կատարել, և դրա արդյունքում մենք նրա բառապաշարում տարբեր համատեքստերում հանդիպում ենք՝

հողագունդ [9, էջ 107 ], երկրագունդ [9, էջ 113 ], երկիր [9, էջ 196 ], աշխարհ [8, էջ 183 ], գույն [9, էջ 112 ], երանգ [10, էջ 447 ], թույր [9, էջ 121 ], կապույտ [8, էջ 183 ], բիլ [8, էջ 111 ], լուրթ [8, էջ 337 ], պաղատել [9, էջ 186 ], հայցել [9, էջ 186 ], խնդրել [7, էջ 46 ], աղաչել [7, էջ 424 ], առավոտ [8, էջ 302 ], այգ [9, էջ 139 ], լուսաբաց [7, էջ 39 ], լուսայգ [7, էջ 162 ], թևածել [7, էջ 139 ], ճախրել [7, էջ 339 ], էլուզակ [9, էջ 253 ], ավազակ [9, էջ 256 ], թշնամի [10, էջ 228 ], ոսոխ [8, էջ 75 ], փոթորիկ [10, էջ 179 ], հողմ [7, էջ 392 ], խորշակ [9, էջ 198 ], սամում [9, էջ 199 ], քամի [7, էջ 100 ], մրրիկ [7, էջ 408 ],

խավար [7, էջ 91 ], մութ [7, էջ 245 ],

կրակ [9, էջ 124 ], հուր [9, էջ 84 ], պող [8, էջ 84 ],

երազ [8, էջ 431 ], պատրանք [9, էջ 125 ],

երկնագնա [7, էջ 226 ], վերսլացիկ [7, էջ 226 ], վերձիգ [8, էջ 75 ],

արփի [9, էջ 147 ], արև [9, էջ 152 ]:

Հայոց լեզվի բառապաշարի հարստությունն ու իմաստային բազմազանությունը բանաստեղծին հնարավորություն են տալիս օգտվելու հայերենի հոմանշային հարուստ բառազանձից: Օգտագործելով հայոց լեզվի մեջ եղած բառային հոմանիշները՝ Խանյանը հաշվի է առել նրանց իմաստային բազմազան նրբությունները:

Երբեմն Ս.Խանյանը հոմանիշները գործածում է միասին՝ զուգահեռ գործածությունով ավելի ուժեղացնելով նրանց իմաստային կողմը՝ դրանով իր խոսքին հաղորդելով հուզականություն և արտահայտչականություն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հագեցվածություն, բազմազանություն է հաղորդում իր խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունն ամբողջանում է հոմանիշների իմաստային նրբերանգներով:

Անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ գործածությունը վնասում է խոսքի սեղմությանը: Բնչպես նշում է Ս. Մելքոնյանը, «...դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուր հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է գորեղանում խոսքի արտահայտչականությունը» [3, էջ 77 ]: Բացի դրանից՝ հոմանիշները միշտ ունենում են ինչ-որ չհամընկնող տարրեր՝ նրբիմաստային, արտահայտչական,

ոճական առումներով: Այդ իսկ պատճառով հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընձեռում առավել ամբողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան: Օրինակ՝

Նրա աչքերում մշուշ էր ու մեզ,

Ինչպես էգերին որոնող մի ցուլ...

... Կորցրած մարդկային **հարզանք** ու **կշիռ**,

Չար ոստիկանի սիրտն էին խուժում: [9, էջ 192 ]

\*\*\*

Մակայն թշնամին **չար** ու **անգույթ** է,

Վառում է արտը, այգին տրորում: [9, էջ 240 ]

\*\*\*

**Եղծվել են, պղծվել** սրբություն ու փառք... [9, էջ 224 ]

\*\*\*

Ու դառնում է նա աչքի լույս,

**Վիզ** ու **սատար** ընկերներին... [9, էջ 225 ]

\*\*\*

Ինչպե՞ս չասի, տո՛ւ, շան որդի,

**Ցնորվա՞ծ** ես, թե՞ **խելագար**... [9, էջ 237 ]

\*\*\*

Արցախցիները պողպատից կարծր են,

**Վեհ** են ու **բարձր** են և անողորմ... [9, էջ 98 ]

Հոմանիշների միջև եղած իմաստային տարբերությունները հաճախ այնքան աննշան են, որ գրողի վարպետությունից է կախված, թե որքանով նա ճիշտ կօգտվի մայրենի լեզվի հոմանիշների հարուստ պաշարից, որովհետև մտքի նրբերանգներին համապատասխան հոմանիշներ ընտրելն այնքան էլ հեշտ չէ:

Հոմանիշներից որևէ մեկի գերադասության խնդիրը կապված է նաև բառի՝ համատեքստում ունեցած կապակցելիության հատկանիշի, նրա՝ կոնկրետ բառային միջավայրում եզակիորեն անհրաժեշտ լինելու հանգամանքի հետ: Պետք է նկատել, որ լեզվում չկան այնպիսի բառեր, որոնք և՛ իմաստով, և՛ կիրառությամբ, և՛ արտահայտչական հնարավորություններով նույնը լինեն: Ճիշտ է ասված՝ «...աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկա մաթեմատիկաբար ճիշտ միևնույն նշանակությունը տվող, ամենքն էլ տարբերվում են իրարից թե շատ և թե քիչ» [4, էջ 213 ]: Ասել է թե՛ որոշ լեզվաբանների կողմից հոմանշային կարևոր սկզբունք համարվող փոխադարձ փոխարինելիության մասին խոսք լինել չի կարող: Իսկական բանաստեղծի համար լեզվում փոխարինող հոմանիշներ չպետք է լինեն: Նա պետք է փնտրի և գտնի տվյալ կապակցության մեջ անփոխարինելի բառը:

Մ.Խանյանը ոչ միայն առատորեն գործածում է լեզվական հոմանիշների տարբեր, բազմապիսի միավորներ, այլև իր չափածոյում ստեղծում և ձևավորում է հոմանշային բազմանդամ շարքեր: «Հոմանիշների շարքը,, գրում է Ա. Սուքիասյանը,, իրենից ներկայացնում է բառերի և դարձվածաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խմբավորում: Հոմանիշների շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածքներն արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական կիրառությամբ, կամ էլ և՛ մեկով, և՛ մյուսով» [5, էջ 126 ]: Ուշագրավ են հատկապես բանաստեղծի խոսքարվեստում հաճախակի գործածական բառերի կազմած հոմանշային շարքերը, ինչպես՝ արև [9, էջ 152 ], արեգակ [9, էջ 181 ], ճամփա [9, էջ 87], ճանապարհ [9, էջ 83], հուր [9, էջ 120], կրակ [9, էջ 203] և այլն, որոնց ստորև կանդրադառնանք:

Իմաստով միմյանցից հեռու բառերը հոմանշային արժեք են ստանում ոչ թե բառային, այլ խոսքային մակարդակում և դրանից դուրս հոմանշային հարաբերություն չեն դրսևորում: Այլ կերպ ասած՝ դրանց հոմանշությունը տվյալ դեպքում հեղինակային, անհատական է: Խոսքային (անհատական) հոմանիշներն ունեն «ճիշտ անհատական դրոշմ և սերտորեն կապված են հեղինակի բանաստեղծական մտածողության ու ճաշակի հետ» [6, էջ 141]: Այսպես օրինակ՝ Ճախրումներով քնքուշ, թեթև... [10, էջ 116 ]

Տվյալ խոսքաշարից դուրս **քնքուշ** և **թեթև** բառերն ամեննին էլ հոմանիշներ չեն, սակայն բերված օրինակում նրանք հանդես են գալիս որպես հոմանիշներ և բնութագրում ճախրումների գեղեցկությունը:

Դիտարկենք մեկ այլ օրինակ՝

**Պատի վն** ու **թախտն** են կանչում այնտեղից... [8, էջ 94]

Առանձին վերցրած **պատիվ** և **թախտ** բառերը նույնպես հոմանիշներ չեն, սակայն բերված խոսքաշարում դրանք հանդես են գալիս որպես հոմանիշներ և արտահայտում են **հեղինակություն, դիրք** իմաստը:

Ինչպես համոզվում ենք բերված օրինակներից, Ս.Խանյանն առատորեն օգտվել է հայերենի հոմանիշների հարուստ պաշարից՝ դրանով իսկ իր խոսքը դարձնելով ավելի գունեղ ու տպավորիչ:

Շնորհիվ իրենց իմաստային նրբությունների, ոճական ու կիրառական բազմազանությունների, հոմանիշներն անչափ կարևոր դեր ունեն գրական լեզվի և մասնավորապես բանաստեղծական լեզվի բառապաշարի մեջ: Հոմանիշների առատ օգտագործումը բանաստեղծական խոսքը դարձնում է գունագեղ, արտահայտիչ ու պատկերավոր, և պատահական չէ, որ ոմանք հոմանիշները դիտում են որպես գրողների ոճն իրարից տարբերող հիմնական միջոցներից մեկը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 159:
2. Պառնապյան Ն., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 21:
3. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, էջ 77:
4. Նալբանդյան Ս., Յերկերի լիակատար ժողովածու 5 հատորով, հ. 3, Յերևան, 1940, էջ 213:
5. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 126:
6. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, էջ 141:
7. Խանյան Ս., Ընտիր Երկեր, 10 հատ. Հ.1, Ստեփ., 2009:
8. Խանյան Ս., Ընտիր Երկեր, 10 հատ. Հ.2, Ստեփ., 2009:
9. Խանյան Ս., Ընտիր Երկեր, 10 հատ. Հ.3, Ստեփ., 2010:
10. Խանյան Ս., Ընտիր Երկեր, 10 հատ. Հ.4, Ստեփ., 2010:

### РЕЗЮМЕ

#### Проявление стилистического и прикладного многообразия синонимов в произведениях Сократа Ханяна Мамикон Яврумян

**Ключевые слова:** словарный запас, синоним, поэтическое слово.

Частое использование синонимов в произведениях Сократа Ханяна наглядно демонстрирует богатство и красочность его словарного запаса. Правильный выбор той или иной единицы синонимичного ряда, несомненно, обусловлен мастерством поэта. Использование синонимов в произведениях поэта преследует несколько целей – более убедительная и воздействующая речь, избегание ненужных повторов, создание рифмы и др.

### SUMMARY

#### Stylistic and Applied Variety's Manifestation of Synonyms in Sokrat Khanyan's Works Mamikon Yavrumyan

**Keywords:** vocabulary, synonym, speech of art and verbal synonyms.

Synonyms are striking illustrations of brilliance and luxuriance of Sokrat Khanyan's vocabulary. Surely, it's the mastery of the poet to choose the right synonym of the word and use it in proper place. The usage of synonyms in the works of the poet has many purposes: to give nuance of intensity and persuasiveness to the speech, to avoid inappropriate repetitions, to create speech rhythm and so on.